Հ ա ս տ ա տ վ ա ծ է՝
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2007 թ. հունիսի 19-ի N 588-Ա/Ք հրամանով

_____ Լ.Մկրտչյան

Օրինակելի Կարգ

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման

Բովանդակություն

Կարգի նպատակը 3

Կարգի խնդիրները 3

1. Ներածություն 3

4. Կրեդիտային համակարգի հիմնական նորմերը ՀՀ բուհական համակարգում 6

4.1. Տարեկան աշխատածավալը և ուսումնական բեռնվածությունը 6

4.2. Կրեդիտների հատկացումը 7

4.3. Կրթական ծրագրերի աշխատածավալները 7

4.4. Գնահատման համակարգը 7

4.5. Ակադեմիական տեղեկագիրը 8

5. Կրեդիտային համակարգի տարրերը և ընթացակարգերը 9

5.1. Ուսումնական ծրագիրը (պլանը) և ավարտական պահանջները 9

5.2. Դասընթացները և կրթական մոդուլները 9

5.4. Ուսումնական գործընթացի և դասընթացների ժամանակացույցերը 10

5.5. Ուսումնառության անհատական ծրագիրը և գրանցումը դասընթացներին 11

5.6. Ուսման առաջադիմությունը 12

5.7. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը 13

5.8. Կրեդիտների փոխանցումը 13

5.9. Ավարտական աուդիտ և աստիճանաշնորհում 13

6. Կրեդիտային համակարգի ինստիտուտները 14

6.1. Կրեդիտների փոխանցման գործառույթի համակարգումը 14

6.2. Ուսումնական խորհրդատուների ինստիտուտը 14

6.4. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները 15

7. Այլ դրույթներ 16

7.1. Բուհի տարեկան ուսումնական բեռնվածքի հաշվարկը 16

Կարգի նպատակը

Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի[1] նպատակը այս ասպարեզում ՀՀ բուհերի համար միասնական կանոնակարգային և կազմակերպական հենքի ձևավորումն է:

Կարգի խնդիրները

- Կրեդիտային համակարգի համար սահմանել միասնական չափորոշիչներ (սահմանումներ, նորմեր)՝ համահունչ ECTS համաեվրոպական կրեդիտային համակարգի պահանջներին, որոնք պետք է միասնական լինեն ՀՀ բուհական համակարգի համար:

- Սահմանել կրեդիտային համակարգում կիրառվող առանձին գործառույթները, ընթացակարգերը և գործընթացները, դրանց բնութագրիչները և իրականացման հնարավոր (պրակտիկայում հաջող կիրառություն գտած) լուծումները և մոտեցումները:

- Տալ ավանդական կրթական համակարգից ուսուցման կրեդիտային համակար-գին անցնելու հիմնադրույթները:

- Բուհերին տրամադրել ուղեցույցներ կրեդիտային համակարգով ուսուցման իրենց սեփական կարգերը մշակելու համար՝ ելնելով առանձին բուհում կրեդիտային համակարգի հիմնական գործառույթների կիրարկման ամբողջականությունից:

1. Ներածություն

1. *ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգը ներդրվում է 2007/2008 ուստարվանից, կրթական կրեդիտների՝ որպես ուսումնական ծրագրերի պարտադիր տարր ներմուծմամբ և ուսանողների ակադեմիական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով:*

2. *ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ամբողջական (փոխանցման և կուտակման) կիրարկումը պարտադիր է՝ սկսած 2010/2011 ուստարվանից:*

3. Կրեդիտների փոխանցման և կուտակման ազգային համակարգը որպես հիմք է ընդունում համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգը, որի հիմնական կանոնները գործում են նաև ազգային կրեդիտային համակարգում՝ գործառույթների և ընթացակարգերի իրականացման միասնական հենք և ուղեցույցներ տրամադրելով այն կիրարկող բուհերին:

4. Ազգային մակարդակում կրեդիտային համակարգի իրականացման միասնականություն ապահովելու նպատակով ԿԳՆ[2]-ն պարբերաբար նորացնում է համակարգը՝ ներառելով նոր սահմանումներ, նորմատիվներ, ուղեցույցներ և գործիքակազմ: Այդ համատեքստում յուրաքանչյուր բուհ ինքնուրույն է իր կրթական ծրագրերում կրեդիտային համակարգի կիրարկման հարցերում:

5. Սույն օրինակելի կարգի հիման վրա բուհի կողմից ստեղծված կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման կարգը հաստատվում է բուհի գիտական խորհրդի կողմից:

2. Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները

Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և չեն կարող ձևափոխվել բուհերի կողմից:

1. **<u>Կարողությունը</u>** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է

[1] Այսուհետ կարգ

[2] ՀՀ Կրթության և գիտության նախարարություն

լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (անկախ բնագավառից):

2. **Կրթական արդյունքը** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

3. **Կրթական (ուսումնական) մոդուլը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

4. **ECTS Կրեդիտը** Դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

5. **ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են**.

   – ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

   – կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),

   – կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,

   – ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

   – կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,

   – կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

6. **Կրեդիտային համակարգը** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

7. <u>Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը</u> միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու համար:

8. <u>Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգի հատկանիշներն են.</u>

– կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

– կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն:

– կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները պետք է նախապես հրապարակվեն (տպագրվեն կամ տեղադրվեն բուհի կայքում),

– հավատարմագրված բուհերում և/կամ կրթական ծրագրերում ստացված կրեդիտները սկզբունքորեն փոխանցելի են բուհերի և կրթական ծրագրերի միջև, եթե դրանց կրթական արդյունքները համարժեք են,

– եթե կրեդիտների փոխանցման գործընթացում ներգրավված բուհերը այդ մասին կնքել են ECTS-ի պահանջներին համապատասխանող եռակողմ (ուսանող, առաքող և ընդունող բուհեր) կրթական համաձայնագիր, ապա այն ունի իրավական ուժ:

3. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

1. Ուսուցման կրեդիտային համակարգին անցնող բուհերը պետք է իրականացնեն համապատասխան ծրագրային և կազմակերպական վերափոխումներ, որոնց մասշտաբները պայմանավորված են բուհում կրեդիտային համակարգի հիմնական գործառույթների ներդրման ամբողջականությունից:

2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) *կրեդիտների փոխանցում*, ինչը ենթադրում է ուսումնական ծրագրի բոլոր բաղկացուցիչների աշխատածավալների կրեդիտների օգնությամբ արժևորում և այդ կրեդիտների փոխանցման հնարավորություն,

բ) *կրեդիտների կուտակում*, ինչը ուսանողին տալիս է դասախոսի, դասընթացների և դրանց յուրացման կիսամյակների ընտրության, ինչպես նաև ուսումնառության ինտենսիվության կարգավորման հնարավորություն և ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն:

Այս գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

3. *Կրեդիտների փոխանցման* գործառույթի հիմնական հատկանիշներն են.

– մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալներն արտահայտված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,

– կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

4. *Կրեդիտների կուտակման* գործառույթի հիմնական հատկանիշներն են.

– ուսումնական ծրագիրը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով,

– ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,

– ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,

– դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ կախված դասընթացի կայացման ժամանակացույցից և/կամ դասախոսի նախապատվությունից,

– ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն[3]:

5. *Կրեդիտների փոխանցման* գործառույթը պահանջում է միայն ծրագրային վերափոխումներ, իսկ *կրեդիտների կուտակման* գործառույթը՝ նաև ուսման կազմակերպման գործընթացի համապատասխան վերակառուցում՝ պահանջվող ընթացակարգերի ապահովման նպատակով:

6. 2007/08 ուս.տ-ից կրեդիտային համակարգը ՀՀ բուհերի բակալավրի կրթական ծրագրերում կարող է ներդրվել միայն փոխանցման գործառույթի մասով (առանց 3-րդ կետի II մասի), իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ նաև կուտակման գործառույթով (առանց 4-րդ կետի V մասի):

4. Կրեդիտային համակարգի հիմնական նորմերը ՀՀ բուհական համակարգում

4.1. Տարեկան աշխատածավալը և ուսումնական բեռնվածությունը

1. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում բոլոր կրթական աստիճաններում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից առնվազն 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:

4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:

5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 23-30 ժամ[4], իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ:

[3] Ենթադրում է համապատասխան օրենսդրական դաշտի առկայություն:
[4] Առանց ֆիզդաստիրակության պարապմունքների:

6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

7. Բացառիկ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը համապատասխան թույլտվության դեպքում կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

4.2. Կրեդիտների հատկացումը

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին ուսանողից պահանջվող աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից[5]:

2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Կրեդիտների թիվը կախված է նաև պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:

3. Դասընթացը մշակող ուսումնական ստորաբաժանումը այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որ դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:

4. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և դասընթացների ընտրությունը (այդ թվում նաև այլ կրթական ծրագրերից) դյուրացնելու նպատակով:

5. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (նախագիծ, ատենախոսություն և այլն) կատարումով և պաշտպանությամբ կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

4.3. Կրթական ծրագրերի աշխատածավալները

1. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 300 կրեդիտ:

2. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 60-120 կրեդիտ է, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 180 կրեդիտ:

3. Բոլոր երեք աստիճանների կրթական ծրագրերում[6] ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

4.4. Գնահատման համակարգը

1. Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը պետք է ունենա գնահատման և նշագրման հստակ և հրապարակված չափանիշներ:

2. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա առանց դժվարության հաշվարկելու կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում

[5] Տես «Ուսումնական ծրագրի (պլանի) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույցը»:
[6] Բացառությամբ երրորդ աստիճանի կրթական ծրագրի որոշ հետազոտական բաղադրամասերի:

ուսանողի վաստակած վարկանիշային միավորները[7]՝ միևնույն ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար:

3. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա հաշվարկելու ուսանողի միջին որակական գնահատականը կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման համար:

4. Գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրումով տարբերակված գնահատականներով, այնպես էլ «*ստուգված/չստուգված*» սկզբունքով:
5. Գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (ստուգարք կամ տարբերակված գնահատում) անկախ բոլոր տեսակի գնահատումներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ առանձին քննաշրջաններում կազմակերպվող քննությունների օգնությամբ[8]:

4.5. Ակադեմիական տեղեկագիրը

1. Ակադեմիական տեղեկագիրն օգտագործվում է ուսանողի ուսումնական գործունեությունը և առաջադիմությունն ուսման որոշակի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար՝ ուսումնասիրած դասընթացների և կրթական մոդուլների, շնորհված կրեդիտների և ստացած գնահատականների գրանցման միջոցով: Այն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

2. Բուհի համապատասխան ուսումնական ստորաբաժանումը յուրաքանչյուր ուսանողի համար նրա ընդունման պահից սկսած վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի վաստակած կրեդիտները և գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների:

3. Ուսանողի ստացած կրեդիտը վավերագրվում է նրա ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ է նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

4. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունը ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները[9]՝
   - *գումարային կրեդիտների* քանակը,
   - *գնահատված կրեդիտների* քանակը,
   - *վարկանիշային միավորները*,
   - *միջին որակական գնահատականը*:

5. *Գումարային կրեդիտը* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

6. *Գնահատված կրեդիտը* գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով:

7. *Վարկանիշային միավորը* բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:

---

[7] Սահմանումը տես 4.5. կետում:

[8] Բացառությամբ դասընթացը սեղմ ժամկետներում վարող այցելու դասախոսի, որը կարող է ընդունել քննությունը դասընթացի ավարտին՝ քննաշրջանի համար առանձնացվող ժամկետից առաջ:

[9] Տես ակադեմիական տեղեկագրի օրինակելի ձևը:

8. *Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* գնահատականների կրեդիտներով կշռված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ):

9. Տարբերակում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *ամփոփիչ* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորներ և ՄՈԳ-եր:

10. Բուհը պարտավոր է ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

5. Կրեդիտային համակարգի տարրերը և ընթացակարգերը

5.1. Ուսումնական ծրագիրը (պլանը) և ավարտական պահանջները

1. Մասնագիտության ուսումնական ծրագիրը (պլանը) ներկայացվում է համապատասխան կրթամասերում խմբավորված պարտադիր և ընտրովի (եթե այդպիսիք նախատեսված են) դասընթացների ցանկով: Կրթամասերի քանակը և անվանումները սահմանում է բուհը:

2. Յուրաքանչյուր դասընթացի (կրթական մոդուլի) համար նշվում է նրա եզակի նույնացման թվանիշը (դասիչը), լրիվ անվանումը, հատկացված կրեդիտների քանակը, պարապմունքի իրականացման ձևը, կիսամյակի համարը (ամրագրված ուսումնական պլանի դեպքում) կամ անվանումը (աշնանային/գարնանային՝ ճկուն ուսումնական ծրագրի դեպքում), դասընթացի նախապայմանը (եթե այդպիսին կա) և գնահատման ձևը:

3. Կրթական ծրագրի ավարտական պահանջներում նշվում է համապատասխան որակավորում շնորհելու համար անհրաժեշտ կրեդիտների ընդհանուր քանակը (այդ թվում՝ ըստ կրթամասերի) և նվազագույն ամփոփիչ ՄՈԳ-ը (ՄՈԳ-ի նվազագույն շեմ կարող է սահմանվել նաև մասնագիտական կրթամասի համար):

4. Բուհը, իր հայեցողությամբ, կարող է սահմանել ընդհանուր ավարտական պահանջներ, որոնք ընդհանուր են տվյալ կրթական աստիճանի բոլոր մասնագիտությունների համար և մասնագիտական ավարտական պահանջներ, որոնք վերաբերում են միայն առանձին մասնագիտություններին:

5.2. Դասընթացները և կրթական մոդուլները

1. Մեծածավալ դասընթացները կարող են բաժանվել առանձին կրթական մոդուլների: Դաս-ընթացների մոդուլացումը կատարվում է՝ ելնելով նվազագույն կիսամյակների ընթացքում դրանք ավարտելու սկզբունքից:

2. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց բնույթով բաժանվում են 3 հիմնական խմբերի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնք յուրացվում են սահմանված կիսամյակներում,

բ) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ընտրում է ուսանողը՝ պահպանելով դրանց նախապայմանները,

գ) ընտրովի դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

5.3. Դասընթացների տեղեկագիրքը

1. Բուհը հրապարակում է դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ բուհի կայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակի տեսքով), որը թարմացվում է յուրաքանչյուր ուստարի:

2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է բուհում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի դարձնելու համար և պետք է պարունակի.

ա) ընդհանուր տեղեկատվություն բուհի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը և ընդունելության պայմանները, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, հիմնական ներբուհական կանոնները (հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն:

բ) տեղեկատվություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, նպատակները և նախանշված ելքային արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի կառուցվածքը կրեդիտներով, քննական և գնահատման կանոնները, ավարտական ատեստավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը (որը պետք է պարունակի տեղեկատվություն դասընթացի տեսակի և մակարդակի վերաբերյալ), ուսուցման տարին և/կամ կիսամյակը, դասընթացի կրեդիտների քանակը (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրներն՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող կարողություններով, համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը), անհրաժեշտ նախապայմանները, երաշխավորվող գրականությունը, ուսուցման և գնահատման մեթոդները, դասավանդման լեզուն և այլն:

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

- անհրաժեշտ տեղեկատվություն օտարերկրյա ուսանողների համար՝ ուսումնառության և բնակվելու պայմանները, միջազգային կրթական ծրագրերը, լեզվական գործող դասընթացները և այլն,

- նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի զեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսումնական ենթակառուցվածքները և այլն:

5.4. Ուսումնական գործընթացի և դասընթացների ժամանակացույցերը

1. Ուսումնական տարվա սկզբում բուհը հրապարակում է (տպագրված և/կամ բուհի կայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակի տեսքով) տվյալ ուստարվա ուսումնական օրացույցը (ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը) ըստ կիսամյակների, որտեղ ըստ օրերի նշվում են ուսուցման սկիզբը և ավարտը, դասընթացներին գրանցման (եթե նախատեսված է) և այդ գրանցումներում փոփոխությունների կատարման ժամկետ-ները, քննաշրջանները և արձակուրդները:

2. Եթե ուսումնական գործընթացով նախատեսված է դասընթացներին ուսանողների գրանցման գործառույթ, ապա բուհը կիսամյակի սկզբից առնվազն 1 շաբաթ առաջ հրապարակում է դասընթացների և քննությունների ժամանակացույցը, որը տեղեկատվություն է տալիս դասընթացների կայացման վայրի, օրվա և ժամի, դասախոսի, ուսանողների թույլատրելի քանակների, քննությունների օրվա և այլնի վերաբերյալ:

5.5. Ուսումնառության անհատական ծրագիրը և գրանցումը դասընթացներին

1. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում օգտագործվում են համապատասխան գործիքներ և ընթացակարգեր, մասնավորապես՝ ուսումնառության անհատական ծրագրեր և ուսանողների գրանցում դասընթացներին:

2. Ուսումնառության անհատական ծրագիրը կազմելիս ուսանողի համար ելակետային փաստաթուղթ է ծառայում դասընթացների տեղեկագիրքը:

3. Հիմք ընդունելով դասընթացների տեղեկագրքում տրված կրթական ծրագրի ավարտական պահանջները, առաջարկվող դասընթացների ցանկը և առանձին դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, ուսումնառության սկզբում ուսանողն ուսումնական խորհրդատուի օգնությամբ կազմում է ուսումնառության իր անհատական ծրագիրը, այն տալիս է հաստատման համապատասխան ուսումնական ստորաբաժանման ղեկավարին և օրինակներից մեկը հանձնում ակադեմիական գրանցումներն իրականացնող կառույցին[10]:

4. Ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը մշակում է բուհը: Անհատական ծրագրում ըստ ուսման տարիների և կիսամյակների ներկայացվում են պարտադիր և ընտրովի դասընթացների ցանկը և դրանց ամրագրված կրեդիտները:

5. Անհատական ծրագրում նշված դասընթացներում ընդգրկվելու համար ուսանողը սահմանված ժամկետներում պետք է գրանցվի ակադեմիական գրանցումներն իրականացնող կառույցում:

6. Դասընթացներին գրանցման գործընթացը կարող է սկսել նախորդ կիսամյակում և շարունակվում է մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների սկիզբը: Բոլոր ուսանողները պետք է գրանցված լինեն մինչև տվյալ կիսամյակի սկիզբը:

7. Դասընթացներին ուսանողների ընդգրկումն իրականացվում է ըստ գրանցման հերթականության, եթե այլ բան նախատեսված չէ դասընթացի նախապայմանով:

8. Սահմանված ժամկետից 2 շաբաթ հետո դասընթացներին մասնակցելու բոլոր տեսակի գրանցումները դադարեցվում են:

9. Բուհը կարող է չեղյալ հայտարարել ցանկացած դասընթացի անցկացումը տվյալ կիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ: Նման դեպքերում այդ դասընթացին գրանցված ուսանողները սահմանված ժամկետներում իրենց անհատական ուսումնական ծրագրերում կատարում են համապատասխան փոփոխություններ՝ ընտրելով նոր դասընթաց, իսկ չկայացած դասընթացը կարող է տեղափոխվել հաջորդ տարի:

10. Անհրաժեշտության դեպքում, սահմանված ժամկետներում ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրում՝ դրանք նախապես համաձայնեցնելով իր ուսումնական խորհրդատուի և համապատասխան ստորաբաժանման ղեկավարության հետ, այնուհետև գրանցվել նոր դասընթացների:

11. Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների դեպքում (դասընթացի բացթողում և/կամ ավելացում) ուսանողը լրացնում է փոփոխությունների համապատասխան ձևաթերթը:

12. Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը մշակում է բուհը: Ձևաթերթում նշվում են բաց թողնված և/կամ ավելացված դասընթացները և դրանց կրեդիտները, համապատասխան կիսամյակները և ուստարիները:

[10] Ակադեմիական գրանցումների գրասենյակի վերաբերյալ տե՛ս ստորև:

13. Անհատական ծրագրի փոփոխության (դասընթացից ազատումը, դասընթացի բացթողումը և դասընթացի ավելացումը) ընթացակարգը հետևյալն է՝

13.1. դասընթացից ազատվելը.

ուսանողը կարող է չեղյալ համարել ցանկացած նախորդ գրանցում տվյալ դասընթացին՝ մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների սկիզբը,

13.2. դասընթացի բացթողումը.

ա) ուսանողը կարող է բաց թողնել դասընթացը ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ՝ պարապմունքների առաջին երկու շաբաթների ընթացքում,

բ) տվյալ կիսամյակի 3-րդից մինչև 8-րդ շաբաթը ներառյալ բացթողումը ձևակերպելու համար ուսանողը պարտավոր է ստանալ նաև այն վարող դասախոսի և համապատասխան ուսումնական ստորաբաժանման ղեկավարության համաձայնությունը,

13.3. դասընթացի ավելացումը.

ուսանողն իր ընտրացանկում դասընթաց կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասախոսի համաձայնությամբ՝ պարապմունքների առաջին երկու շաբաթների ընթացքում:

14. Ուսանողը կազմում է տվյալ կիսամյակի պարապմունքների իր անհատական դասացուցակը՝ ելնելով ուսումնառության իր անհատական ծրագրից և դասընթացների հրապարակված ժամանակացույցից:

15. Սահմանված ժամկետում ուսումնառության անհատական ծրագիր չներկայացնելու դեպքում բուհն ուսանողի ուսումնառությունը կազմակերպում է տվյալ մասնագիտության համար կազմված տիպային ուսումնական պլանով:

16. Բուհում կրեդիտների կուտակման գործառույթի բացակայության դեպքում գործում են ավանդական ուսումնական պլանները՝ դասընթացների և կրթական մոդուլների յուրացման ամրագրված հաջորդականությամբ:

5.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողների:

2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝

   ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով);

   բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների[11] կրեդիտները;

   գ) ապահովել է տվյալ կրթական աստիճանի (ծրագրի) համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը:

3. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:

4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղել թերացումներն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը ծրագրի

[11] Տես դասընթացների ա) խումբը, բաժին 5.2, կետ 2:

նվազագույն պահանջներին համապատասխան: Փորձաշրջանի տևողությունը սահմանում է բուհը:

5. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը դառնում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում չի դուրս գալիս այդ կարգավիճակից:

6. Միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են նրանց վարկանիշային միավորների օգնությամբ:

5.7. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

1. Դրական գնահատված դասընթացի քննության վերահանձնում չի թույլատրվում:

2. Անբավարար գնահատված դասընթացի վերահանձնման կարգը սահմանում է բուհը:

3. Տվյալ կրթական ծրագրի համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմն ապահովելու նպատակով ուսանողը համապատասխան ուսումնական ստորաբաժանման թույլտվությամբ կարող է կրկնել դասընթացը, սակայն տվյալ դասընթացին հատկացված կրեդիտներից ավել կրեդիտներ ուսանողին չեն տրվում, իսկ ՄՈԳ-ում հաշվի է առնվում այդ դասընթացի վերջին գնահատման արդյունքը:

4. Հաջողությամբ հանձնած դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ուսանողի ցուցաբերած առաջադիմությունից կամ ուսման ընդհատման հանգամանքից:

5. Կրեդիտների կուտակման արդյունքում վերանում է բուհից հեռացված ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

5.8. Կրեդիտների փոխանցումը

1. Կրեդիտները մեկ բուհից մյուսը փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի համաձայնությամբ:

2. Կրեդիտները փոխանցելի են ուսումնական ծրագրերի և բուհերի միջև, եթե դրանք համապատասխանում են որոշակի պահանջների: Որևէ ուսումնական ծրագրից ստացված կրեդիտները կարող են փոխանցվել մեկ այլ ուսումնական ծրագիր, եթե՝

   ա) դրանց բովանդակությունները միանման են,

   բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

   գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

3. Այլ բուհում ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի անցկացման դեպքում ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, առաքող և ընդունող բուհերի միջև:

5.9. Ավարտական աուդիտ և աստիճանաշնորհում

1. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում շրջանավարտների աստիճանաշնորհումը կատարվում է ծրագրի ավարտական պահանջների կատարման աուդիտից հետո, որը կատարվում է ակադեմիական գրանցումներն իրականացնող կառույցի և համապատասխան ուսումնական ստորաբաժանման մասնակցությամբ:

2. Ավարտական աուդիտով ստուգվում են ուսանողի ակադեմիական տվյալների (կուտակած կրեդիտների քանակի ու բովանդակության, ամփոփիչ ՄՈԳ-ի և ավարտական ատեստավորման) համապատասխանությունը մասնագիտության ավարտական պահանջներին:

6. Կրեդիտային համակարգի ինստիտուտները

6.1. Կրեդիտների փոխանցման գործառույթի համակարգումը

1. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործառույթների կազմակերպման համար բուհերը նշանակում են համապատասխան բուհական համակարգողներ:

6.2. Ուսումնական խորհրդատուների ինստիտուտը

1. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում ուսանողների անհատական ուսումնական ծրագրերը կազմելու և ուսման ընթացքում նրանց աջակցելու նպատակով բուհերի մասնագիտացնող ստորաբաժանումները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկվում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետները:

2. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի խորհրդատուների թիվը սահմանում է բուհը՝ ելնելով դրանցում ընդգրկված ուսանողների քանակից և բուհի ռեսուրսային հնարավորություններից:

3. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում է իրեն կցված ուսանողների առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

4. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, առավել արդյունավետ և նախընտրելի անհատական ուսումնական ծրագրեր կազմելու նպատակով նրանց համար պարբերաբար իրականացնում խմբային և անհատական խորհրդատվություններ, աջակցում անհատական ծրագրերում փոփոխություններ կատարելիս և այլ հարցերում:
5. Ուսումնական խորհրդատուի իրավունքներն ու պարտականությունները սահմանում է բուհը:

6.3. Ակադեմիական գրանցումների գրասենյակը

Կրեդիտների կուտակման գործառույթի ընթացակարգերը ապահովելու նպատակով բուհերը կարող են ստեղծել համաբուհական կամ ֆակուլտետային ակադեմիական գրանցումների գրասենյակներ: Ակադեմիական գրանցումների գրասենյակի հիմնական գործառույթներն են.

1) կազմել և հրապարակել (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) բուհի դաս-ընթացների տեղեկագիրքը յուրաքանչյուր ուստարվա համար,

2) կազմել և հրապարակել (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) տեղեկա-գրքում ներկայացված դասընթացների և դրանց քննությունների ժամանակացույ-ցերը յուրաքանչյուր կիսամյակի համար,

3) ապահովել դասընթացներին ուսանողների գրանցման և ընդգրկման (այդ թվում՝ ինտերնետի օգնությամբ) գործընթացը,

4) ապահովել դասընթացների և դրանց առանձին բաղադրամասերի ուսումնական հոսքերի ձևավորումը և պարապմունքների կազմակերպումը,

5) գրանցել և հսկել ուսանողների դասահաճախումները,

6) ապահովել քննական ամփոփագրերի պատրաստումը, տրամադրումը և քննու-թյունների արդյունքների մուտքագրումն ուսանողների ակադեմիական տվյալ-ների միասնական (էլեկտրոնային) բազայում,

7) հաշվարկել և վերահսկել ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցա-նիշները (ՄՈԳ և կուտակած կրեդիտների քանակ), պատրաստել և պարբերա-բար թարմացնել ուսանողների ակադեմիական տեղեկագրերը,

8) համապատասխան ուսումնական ստորաբաժանումներին (ֆակուլտետներին) տրամադրել տեղեկատվություն ուսանողների առաջադիմության և դասահաճախումների վերաբերյալ,

9) ուսումնական ստորաբաժանումների հետ համատեղ իրականացնել ավարտական պահանջների կատարման աուդիտ,

10) ապահովել գրասենյակի կայքի շահագործումը, անհրաժեշտ ուսումնական (դասընթացների և քննությունների ժամանակացույցեր) և մեթոդական (դասընթացների տեղեկագիրք) տեղեկատվության տեղադրումը կայքում և դրանց պար-բերաբար թարմացումը,

11) իրականացնել օժանդակ և հարակից այլ գործառույթներ:

6.4. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝
   - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման կարգին և ուսումնառու-թյան իր անհատական ծրագիրը կազմելիս խստորեն հետևել դրա պահանջ-ներին,
   - կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահման-ված պահանջները,
   - կանոնավոր հաճախել ուսումնառության իր անհատական ծրագրում ընդ-գրկված բոլոր դասընթացներին:

2. Ուսանողը՝
   - պետք է հաշվի առնի, որ ակադեմիական գրանցումների գրասենյակը չի ստուգում և, հետևաբար, ոչ մի պատասխանատվություն չի կրում ուսանողի կողմից ընտրված դասընթացների կայացման ժամերի համընկման և ուսում-նական ծրագրի պահանջներին դրանց համապատասխանության համար,
   - կրում է անձնական պատասխանատվություն ուսումնառության իր անհատա-կան ծրագրի և պարապմունքների դասացուցակի ճշտության և ամբողջականության ապահովման, դրանց ստուգման և ցանկացած սխալի կամ բաց-թողման անհապաղ ճշտման համար:

3. Ուսանողն իրավունք ունի՝
   - ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար բուհի կողմից առաջադրվող պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
   - միևնույն դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկա-յության դեպքում կատարելու ընտրություն՝ ելնելով դասախոսի նախապատվությունից և/կամ դասընթացի կայացման ժամանակացույցից,
   - բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ այլ բուհում՝ այդ բուհի կանոններով սահմանված կարգով,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագ-րերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը բուհում,
- հիմնավորված կերպով դիմելու դեպքում ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ կազմված ուսումնառության լրիվ կամ որևէ շրջանի համար:

7. Այլ դրույթներ

7.1. Բուհի տարեկան ուսումնական բեռնվածքի հաշվարկը

1. Ուսումնական ծրագրում և դասընթացների տեղեկագրքում դասընթացին հատ-կացված կրեդիտների հետ մեկտեղ նշվում է նաև շաբաթական լսարանային ժամաքանակն ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ և այլն):

2. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում ուսանողների անհատական ուսումնական ծրագրերի վերլուծության և առանձին դասընթացներին ուսանող-ների գրանցման տարիների ընթացքում կուտակված վիճակագրական տվյալների հիման վրա բուհը կազմում է ինչպես հաջորդ ուստարվա ուսում-նական բեռնվածությունը, այնպես էլ դասընթացների ու քննությունների ժամա-նակացույցերն ըստ կիսամյակների: